ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան 4 տոլար թղթադր.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարկն. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ուշ ընելման բաժնեգինն վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Բ ՏԱՐԻ ԹԻՒ 80

1887 ՅՈՒՆԻՍ 1

ՄԱՅԻՍ 20 (Հ. Տ.)

ՁՈՐՆԵԳԱՒԹԻ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ԳԱՆՁՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործակցական ընկերութիւններ.— Ազատութիւն.—Նամակ Թիւրքիահն (Զմիռն) —Վաճառ լուրեր.—Առ գաւառացի պաշտօնեայ.— Նոր հրատարակութիւն.— Բաֆֆիի «Զալալէդդինե»ը.— Ֆրանսական լուրեր.— Արտասահմանի լուրեր.— Առեւտրական.— Արժէնթի պատասխանիներ.— Ծանուցումներ.— Բանասիրական (Հայի վրէժ)։

ԴՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիոյ մէջ Գործակցական ընկերութիւնների 19րդ Համաժողովը (congrès) նիստ ընել հրաւիրուած էր Հոգեգալուստի տօնի (բուռ լուսինակաւ) նէն) երկուշաբթի օրն։ Համաժողովի նիստերը կը տեւեն երեք օր. ուրեմն այսօր կը վերջանան։ Աւելորդ չենք համարիր այս առիթով երկու տող գրել Գործակցական ընկերութիւններուն նկատմամբ։

Ընկերական և տնտեսական խընդիրներով զբաղողների ուշադրութիւնը վերջին ժամանակներ գրաւած է մասնաւորապէս գործաւորների դերբուքիւնը։ Անոնց վիճակը կարելի եղածին չափ բարելաւելու և տագաղային մէջ իրենց մի դրամագլուխ կազմելու համար զանազան խորհուրդներ յայտուած, ծրագիրներ յօրինուած և ընկերութիւններ կազմուած են։ Այս կերպով գործաւորներին, գիւղացիներին և փոքր դերասագլուխ ունեցողներին ապրուստի դիւրութիւններ տալու և անոնց նիւթական վիճակի կարելի եղածին չափ բարւոքման օժանդակելու համար զանազան միջոցներ ձեռք առնուած են յորոց մին ալ այս «Գործակցական ընկերութիւններ»ի (Sociétés coopératives) հաստատութիւնն է։ Գործակցական ընկերութիւնների նպատակին և սկզբունքին վրայ մի համառօտ տեղեկութիւն տուած կը լինինք յետագայ տողերով։

Յայտնի է որ թէ՛ ուտեստի, թէ՛ հագուստի և թէ՛ տան վերաբերեալ ուրիշ ամեն կարեւոր նիւթերն մեծ քանակութեամբ և նախնական տարողութեան տեղէն առնուած ժամանակ աւելի աժան կը լինին քան թէ մի քանի հատ միայն և ձեռքէ ձեռք անցնելէ յետոյ գնելով։ Արդ, ամեն տան մէջ ամեն օր հայ առնելու, մին և այլ ուտելիքներ առնելու ըստիպողական պէտք կայ և ամեն մարդ չէ կարող մեծ քանակութեամբ ցորեն առնել իւր տան հայը եփելու համար, բաղմաթիւ ոչխարներ գնել իւր միակ տան պէտքին համար ևն. ուստի բազմաթիւ ընտանիքներ միանալով «Գործակցական ընկերութիւն» կը կազմեն և ընկերութեամբ կը բանան մի փուռ և երեք դիւրութիւններ ունենան, հետզհետէ կը բանան նաեւ մսավաճառանոց, նպարեղէնի խանութ, հանդերձավաճառանոց և այլն։ «Գործակցական միութեան» բոլոր անդամներն իրենց առուտուրն կընեն նոյնոյն խանութներէն, որով թէ՛ ապրանքին ուրկէ գալն, ինչ տեսակէ լինելուն և բոլոր հաշիւներին իրենք ալ կը տեղեկանան և իրենց գնած բաներէ ընկերութեան մնաւուկին մէջ գոյացած շահոմն ալ մի դրամագլուխ կը կազմեն իրենց համար որի շահն ալ կը տանեան ամեն տարի որոշեալ ժամանակներուն մէջ։ Այդ ընկերութիւնների ընդհանուր ժողովներուն մէջ կորոշեն նաեւ մի գումար յատկացնել ընկերութեան անդամներուն բարոյական վիճակի զարգացմանը օժանդակելու, անոնց և անոնց զաւակաց կրթութեանը օգնելու և կամ մի բարեգործական նպատակի նպաստելու համար։

Այդ զանազան Գործակցական ընկերութիւններէ երեսփոխաններ մի որոշուած ժամանակի մէջ միասին հաւաքուելով Համաժողով կը կազմեն և այդ համաժողովի մէջ կը խորհրդակցին բոլոր այն կէտերուն վրայ որոնք կրնան օժանդակել գործաւոր դասակարգի ընկերային վիճակի բարւոքմանը։ Իրենց խորհրդակցութեանները օրակարգին մէջ առաջին տեղը կը բռնեն միշտ իրենց ընկերներուն միջ տաւարական զարգացման օժանդակե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԻ ՎՐԷԺ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՕՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

ՆՈՒՒԷՐ
ՀԵՐՈՍՈՒՀՈՒՍ ՀԱՄԱԿՐՈՂ,
ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ

Բ. — Մնող ու որդի

(Շարունակութիւն 69րդ թիւեն)

Մինչդեռ բակում աշխատում էին Մելիքի աղախիններն ու ծառաները, Թոնրատան մի կողմում մի քանի կաթսաներ կառավարում էր մի տաճիկ, գործ դնելով ամեն ուշադրութիւն, որ մահմետականի ճաշը չը պղծուի քրիստոնէի ձեռքին դիպած մթերքներով։ Նա ինքն էր ծարթում ու յօշոտում հաւերը, վոսեաններըը, ինքըն էր թրջում բրինձը, պատրաստում խորովածը։ Տաճիկ խոհարարի դէմքը անթաւականութիւն էր ցոյց տալիս, թէեւ պակասութիւն չէր տեսնում, թէեւ իր ուշադը իսկոյն կատարում էին երկու օգնական ծառաները։

Երբեմն դրսում երեւում էր և մի վաչկատիպ սեւաչեայ օրիորդ։ Նա կարգադրութիւններ չէր անում, նա լուռ էր և անտարբեր։ Կարծես նրան հետաքրքրում էր միայն արեգակը, որ հետզհետէ մօտենում էր միջօրէի կէտին։ չուտ չուտ նայելով այդ ուրախ լուսատուին, օրիորդը մռնռում էր ատեն։ Թուում էր թէ նրան տանջում էր արեգակի ընթացքը. ասես թէ չէր ուզում որ կէսօր լինի, չէր ուզում որ արեգակը չարժուի։

Գայիանէն էր այդ օրիորդը, Մելիք-Յուսէինի դուստրը, մի չքնաղազգեստ նազելի արարած, հարուստների բնութեան սիրասուն զաւակը։ Վարանտայի գարնան ծաղիկները այնքան զուարթերես չէին, որքան Գայիանէն։ Նա թեթեւաշարժ էր ինչպէս լեռնային հովիկը, որ ծննդենից ի վեր ծանանել էր նրա թուխ մազերը, որ քնքոյշ էր պահել նրա կարմիր դէմքը։ Նա Մելիք-Յուսէինի միւսաար զաւակն էր. ծնողական փայփայանքը, կրօնական կրթութիւնը դրել էին նրա մէջ մի վեհ հոգի, մի սիրող սիրտ։ Իշխանազուն օրիորդը անձամբ ծանօթ էր տանջին, սկսած գիւղի աւագներից մինչեւ ապքատ ջրատարպանը։ Նրան սիրում էին ամենքը, նա թշնամի չունէր։ Գիւղի պահապան հրեշտակն էր Գայիանէն։ Մելիք-Յուսէինը չը տեսաւ իր սիրելի զաւակի բախտը. և նրա մահից յետոյ սքդաւոր օրիորդը իր սգաւոր մօր հետ աշխատում էին անմռաց պահել հանգուցեալ Մելիքի գեղեցիկ յիշատակը ...

Բայց սեւաչեայ օրիորդը որքա՜ն տըխուր է այսօր։ Նրան կարծես տանջում է իր դէղեցկութիւնը։ Ո՞վ կը լինի մի այդպիսի դրութեան մէջ։ — Մի քրիստոնեայ գեղանի, որին վիճակուած է մահմետականի կին դառնալ։

Այո՛, Գայիանէն մահմետականի նշանած է։ Անբա՛ռնը որբիկ։ Մինէ՜ն այդ էր մի հասարակութեան մխիթարիչ հոգու վարձը։ Որքա՜ն ցանկալի էր նրան այդ բոպէին լինել մի հովուուհի՝ գեղեց ու պատառուռուն չորերով, բուք ու բորանի, անձրեւի տակ ու ցեխի մէջ մեծացած կոչտացած մի աղջիկ, լինել այսպէս, բայց ոչ երբէք մի Մելիքի աղջիկ, մի հեզ Գայիանէ, որ իր հօր բարերարութիւնների երկնառաք վարձն էր համարվում, և մի Սուլէյման բէկի նշանած։ Նա վաղուց իրան գցած կը լինէր կուսանոցի առջեւը սեպացած ժայռից. դրանից հետ բան չը կար, նա ամեն օր գնում էր կուսանոց, չեղինէ կոյսի մօտ ուսում առանալու. մի քայլ միայն դէպի ձախ — և նրան այլ եւս չէր տանջիլ իր դէղեցկութիւնը։ Բայց ի՞նչպէս անել այդ քայլը։ Իրանից յետոյ ի՞նչ կը լինէր։

Ի՞նչ պիտի լինէր.— պիտի չարունակուէր նոյնը, ինչին չէին կարողանում տալորել Աւետարանոցի հայերը։ Ինչպէս և առաջ, չարաչար մի անգամ բէկի մարդը երեկոյեան իր առջեւից պիտի տանէր մեզնէր նրա ննջարանը մի կոյս հայուհի, որը միւս առաւօտ թշուառ ինչպէս մի բռնաբարուած հայուհի մնէնակ պիտի գըներ տուն իր հօր ու մօր երեսին փուչ դառնալու համար։ Հէնց այդ հայուհիներին բէկի գրկից ազատելու մտքով էր Աննա-խաթունը գայիանէին տուել Սուլէյման բէկին։ օրիորդը իր մօր կամքին մի խօսքով էլ չէր ընդդիմացել, միայն թէ հայ ծնողների երեսը այլ եւս չը ծակոտին վշերը։

Բէկը խոստացել էր։ Այդ խոստումնքն էր օրիորդին ոտքի վրայ պահում և չէր թողում որ թուլացած սիրտը վերջնականապէս վայր ընկնի յանկարծ։

Գ.— Մեծ շնորհ

Ձայնը պատրաստ է, հիւրերը հաւաքուել են, բայց սեղան չեն բացում, սպասում են մեկին։ Ծառաները միմեանց ետեւից գնում են գալիս ու յայտնում, որ նա չուտով կը գայ։ Աննա-խաթունը կանգնած սպասում է այդ մեծարելի հիւրին։

Դա Սուլէյման բէկն էր, որ առօք փառօք եկաւ մտաւ բակը, հպարտութեամբ բարեւեց իր ըզքանչին, ոտքի կանգնած աւագանուն և գնաց նստեց։

Բէկը մի երկար ու նիհար տաճիկ էր ոսկորացած այրական դէմքով, խոր ընկած աչքերով և սեւ հաստ յօնքերով ու ընչացքով։ Նա գլխաւոր էր տաճկական զօրքի, որ բռնած ունէր Վարանտայի և հարեւան գաւառների դիւղերը։ Զօրքերի գլխաւոր հրամանատարն էր Սարը-Մուսթաֆա փաշան, որ նստած էր Գանձակում։

(Շարունակելի) Բ. Ա. Գ.

լու խնդիրը առանց որոյ չէ կարելի բնաւ ոչ մի յառաջդիմութիւն, և գործակցութեամբ վաճառքներ արտադրելու խնդիրը որով դիւրութիւն կունենայ գործարանի մէջ բանող գործաւորը իւր աշխատութեան չահը լաւագոյն վայելելու։

Իւրաքանչիւր համաժողովի գումարումը պատճառ եղած է միշտ մի քանի քայլ յառաջ մղելու գործակցական ընկերութիւնների գաղափարներն և ձեռնարկութիւնները։ Անգլիական Գործակցական ընկերութիւնների առաջին Համաժողովը գումարուած է Լոնտոն 1869 ին։ Այդ Համաժողովի հրաւէրին այն ժամանակ պատասխանած էին միայն 63 ընկերութիւններ Անգլիոյ, իսկ օտար երկիրներէ առնի չատ պատուիրակներ եկած էին։ Այդ ժողովի անդամները հաւատաք ունէին որ այսչափ փոքր չրջանի մէջ իրենց սկսած գործ հեազհեազ պիտի ընդարձակուի, այնպէս որ 18 տարի յետոյ, այսինքն այժմ, այդ գործակցական ընկերութիւնների գաղափարը այնչափ յառաջդիմութիւն ունեցած է որ Անգլիոյ մէջ 800,000 ընկեր ունեցած են այդ ընկերութիւնները և ընկերների ընտանիքի անդամներն ալ միասին հաշուելով՝ 3,000,000 գործակից ընկեր բաղկ կը լինի Անգլիոյ մէջ։

Այս տողերը գրելով նպատակիս միանգամայն ցոյց տալ է թէ ուրիշ ժողովուրդներ ինչպէս կրնան իրենց վիճակ բարելաւել զանազան միջոցներու ձեռնարկելով և իրենց տարկար պէտերը իրար միացնելով հեարդհեաէ կը գոհանան, ընկերութիւններ կազմելով մեծ մեծ գործեր տեսնելու կարող կը լինին, իսկ մենք Հայերս վարժ ենք երեմիականներ կարդալու։ գործը յառաջ տանելու ժամանակ կը մոռնանք։

Մի քանի տնդ առ փոփոխներ յայտնուած են «Արմէնիա» լրագրի նիւթական վիճակը ապահովելու միջոցներու ձեռնարկել։ Ենթարհակ ենք որ մի քանի խումբեր և անհատներ մեկ մեկ որոշ գումար յատկացնելով այդ նպատակի, իրենց քաջալերներ ոչ միայն խօսքով այլև գործով տուած են այս լրագրի։ Բայց չէ՞ կարելի արդեօք դիմել նաեւ այնպիսի միջոցներու որով լրագրին նիւթական վիճակը միանգամայն ընդ միշտ ապահովուած լինի։ Այդ կարելի է, և առանց մեկի մը ծանրութիւն լինելու։ Մենք կը խորհինք կազմել մի տեսակ ընկերութիւն որի անդամներն ընկերութեան ծախած ապրանքներէն իրենց չահ տանել պատ՝ մի փոքր մաս ալ թողուն ի նպաստ «Արմէնիա»ի լամպագրութեան։ Այդ խորհրդի ծրագիրը կազմակերպելէ յետոյ, մենք կը հրատարակենք գոյն և հրաւէր կարդալով համակրողներին, միեւնոյն ժամանակ մենք կը ձեռնարկենք նաեւ գործադրել այդ ծրագիրը։

Մ. Փ.

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ես միշտ ի մահ կախադան,
Միշտեղ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտի գոչեմ
Անդադար Ազատութիւն։

ՆԱՒՐԱՆԴԵԱՆՑ

Այո՛, ազատութիւն և կեա՛նք...։

Ուր որ ազատութիւն կայ, հոն է երջանկութիւն, հոն է հանդիստ, հոն է կեա՛նք. Հայրենասիրութիւնն ազատութեան հետ միասին կընթանայ, առանց ազատութեան սուրբ գաղափարն ունենալու հայրենասէր լինելն անտերեւ ծառի մը ճիւղերուն կը նմանի, որոց մերկութիւնն ոխուր որդութիւն մը կը ձգէ մտքերու վրայ։ Ի՞նչ կարժէ այն կեանքն որ ուրիշի մը սրոյն խաղալիկն է. որչա՛փ սարսափելի դժոխք է այս աշխարհ այն մարդուն համար որոյ ինչքն ու ստացուածք, անունն ու թանկագին պատիւը բռնաւորի մը մեկ ակնարկովն ոտնակոխ կրնան լինիլ. միթէ աւելի քաղցր չէ՞ մեռնիլն այսպիսեաց համար քան մատնուած լինիլ դերութեան ու տարկութեան յատ ատելութեան. այո՛, մեռնիլ, մեռնիլ թօթափելով բռնութեան սեւ լուծն ու Թողուլ ապագայ սերնդեան անդին ժառանգութիւն մը, Հրեչտակին ազատութեան։

Կրսեն թէ կեանքը երազ մ'է. գուցէ չատեր ալ այս մասք յիմարութիւն մը սեպեն «երազ»ի մը համար մեծ դժուարութեանց մտնել. բայց ուղիղ չէ այս կարծիք. այո՛, կեանքը երազ մ'է, բայց միայն այս աշխարհի համար, ուր մարդս քիչ ժամանակի մէջ իր օրերն անցուցած կը լինի երազի մը պէս. կեանքը երազ մ'է ըսուած է դարա մեծ կարեւորութիւն արուելու համար և ոչ թէ երեսէ ձգուելու նպատակաւ։ Մեր ժամանակը հովի պէս կանցնի. պէտք է գոյն բարւոքելու համար բոպէ մը իսկ չկորնցունել։ Անշուշտ հարցուցած կլինիք թէ ինչ հարկ այս անցաւոր կեանքը բռնութենէ ազատելու համար այդչափ քրտնել քանի որ քիչ ատենէն գերեզմանը պիտի ծածկէ զմեզ։

— Կեանքը երազ չէ բնաւ, այլ յատկանական գոյութիւն մը որ վերջ չունի կամ անծանօթ է մեզ, սակայն քանի որ կը հաւատանք թէ մեր հոգին չի վերջնանար, անշուշտ նաեւ պարտինք հաւատալ թէ մեր կեանքն ալ անմահ է. վասն զի կեանքը նոյն իսկ հոգւոյ ինքնուն կամ չի սղնչանալուն մէջ կը կայանայ, իսկ մարմինն — որ կեանքը վայելողը չէ և չի կրնար լինել — հոգւոյ համար առժամանակեայ բնակարան մ'է կամ ձեւ մը հանդերձ զոր որ պիտի ձգէ երթայ երբ գործս հիմնայն տեսնէ։ Եւ գոյէ մեր այժմեան կեանքը չարաչարութիւն մ'է որ կուգայ, ինչպէս որ մեր անտիլիւվիական օրերն չարաչարութիւն մը պիտի լինի մեր ներկայ կենաց։

Հաւատա ունինք որ մեր մահուընէ վերջ աւելի փառաւոր կեանք մը պիտի ունենանք և չենք կրնար չի վերկայել թէ մեռնելէ յետոյ մեր ներկայ ղդացումներն, առաքինութիւններն կամ չարութիւններն հն. ազդեցութիւն պիտի ունենան հանդերձեալ կեանքի վրայ. նա որ առաքինի չէ հոս, ինչո՞ւ յառաջիկայ կենաց մէջ բարձր աստիճան մը պիտի ունենայ և ո՞վ գիտէ ինչ վարձատրութիւն կայ առաքինիին համար և գուցէ մեր ներկայ աստիճանն յառաջիկային յետոյ ուրիշ կեանքերու ալ դուռներն բանալու բանալին լինի...։

Արդ հոս առաքինի լինելն այս հողագնդի վրայ չի վերջանար, նա պիտի գայ մեզ հետ որչափ որ երթալ ապմանած է մեզ համար տիեզերաց ճարտարապետէն։

Իսկ ազատութիւն սիրելն առաքինութեանց գլխաւորներէն մին է. նա որ յանձն կառնէ ստրկութիւնն, Աստուծոյ չնորհած մի մեծ պարգեւն անարգած կը լինի և հետեւաբար առաքինութեան թշնամին է. երբ Ա. բարչի տուած կեանքը ուրիշի ոտքին կը թողունք որ կոխան դառնայ, միթէ մեզմէ աւելի անհաւատարիմ մահկանացու մը կրնա՞յ գտնուիլ միեղէրաց Գետին առջեւ։ Աստ բռնատէրն որչա՛փ մեզաւոր է...։

Կենաց անհրաժեշտ պայմաններու մին է ազատութիւնը զոր որ Աստուած հաւասարապէս բաշխած է ամեն մահկանացուի. երբ կորզուի ազատութիւնն, կորզուած կը լինի նաև կեանքն որ տրուած է արդիւնաւոր լինելու համար։ Եւ ինչո՞ւ յանցաւոր պիտի կրնայ նկատուիլ այն մարդ որ դինքը բռնաբարող սրիկան գիտնայ և կարողանայ հարուածել. ինչո՞ւ մարդասպանները կը կոխեն — որովհետև դոքա ուրիշի մը կեանքը կը կորզեն. և ինչո՞ւ չի կոխուին անոնք որ քանոյ մը կեանքը կը կորզեն. և ինչո՞ւ չի կոխուին անոնք որ ամբողջ ազգ մը կը ստրկացնեն։

Զարգացում, յառաջդիմութիւն — լոյսն իրենց բնակարաններն ազատ ապագայ մէջ կը չինեն ընդհանրապէս. հարստութիւն, հանգիստ, դիւրակեցութիւն ու երջանկութիւն ազատ ժողովուրդներն պիտի վայելեն. փորձերն մեր առջեւ են, հիմա հարկ չկայ ապացոյցներ բերելու։

Ոչ ոք իրաւունք ունի իր նմանին վրայ բռնանալու. ամենքս ալ մեկ հօր զաւակներ ենք արդէն։ Ո՞չ ապարքեն բռնանալն ապտանել կը նըշանակէ. գուցէ գայ օր մը յորում բռնացողք իրը ոճրագործ դատուին ու մահու պատժոյն գատապարտուին... Ահա այդ օր է օր երջանկութեան, օր հաստատել ազատութեան որն որ ամենարժան է ծիծաղ, բարեյաջողատես մեծագոյնն...։

(Շարունակելի) Հ. ՉԱԻԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԼԻՆ

Զմիւռն, 9/21 մայիս 1887

Անուանի յոյն ազգասիրուհի Գարթան Աստրէա ձեռքակալուեցաւ Զիւրքինճէ գիւղացի յոյնի մը մատնութեամբ։ Մատնիչ յոյնը քաղաքս եկած էր գատարանին առջեւ վկայելու համար. պանդոկն երթալով կեցուցին ուսուչէ վերջ. հազիւ հազ պանդոկի դուռէն դուրս կելնէ և ահա հեռէն ուրիշ յոյն մը բեկբեկուելով գայն սպաննել կը փորձէ, բայց չյաջողելով սպաննել կը փախչի շուտով և կանհետանայ։ Ագաւասիկ իրողութիւն մը որ կուգայ հաստատել թէ Յոյներն ո՛ր աստիճան սաեղութիւն կունենան ընդդէմ մատնչաց։ Երանի՛ թէ մեր հայ եղբարք եւս օրինակ առնէին Յունացմէ։

Ջերբակալուած ատզակապետին նոյն ինքն Գարթան Աստրէան լինելուն վկայած և հաստատած են գայն չատեր. նոյնպէս բանտարկուած ատզակապետներ ճանչցած են գինք և հաստատած են. բայց գեռ չէ դատապարտուած քան որում կաբանայ ինք։

Պատահմամբ մի ճամբորդի մօտ տեսայ և կարդացի «Արմէնիա»ի 74րդ թիւը յորում «Հայերը Եգիպտոս» վերնագրեն տակ լուրեր կային հաղորդուած։ Ընչա՛փ մեծ ուրախութիւն զգացի կարդալով այդ լուրեր, և զգացին ամեն անուն որոնք լսեցին։ Աչդարեւ երջանիկ են եգիպտահայեան մեր ազգակիցներ որ իրենց մէջ ունին բարեչան Առաքնորդ մը, որու միջնորդութեամբ է' ակնկալուի 800 ռուսի տահուսեր պարտքը կը վճարուի և թէ' յաւիտեանս գատապարտուած հայազգի անհատ մը բանտէն կարձակուի, չնորհիւ Նուպար փաշայի։ Ուրեմն թո՛ղ հազար ազրեն այդպիսի հայեր որ կաշխատին իրենց ունեցած դիրքէ օգուտ քաղել որով թէ' իրենց անուն պանծացնեն և թէ' Հայութեան պատիւ կը բերեն։

Եգիպտոսի բարեչան Առաքնորդը կը յայտնի ցանկ գատապարտեալ մը արձակել տալ Զատկի առթիւ. բայց հոս մեր Մելքիսեդեկ Սրբազանն ի՞նչ կընէ. ոչինչ յանցանքով բանտարկուած 7 վանցիներ Զատկի օր բանտ կը ձգէ. թէեւ կատարութիւնը իրեն իմաց կուտայ որ գոյ եղաչատուրէ, բայց Նորին Սրբազնութիւն առ այս ոչինչ կը պատասխանէ մինչդեռ տեղւոյս Յոյն Առաքնորդը 43 Յոյն չանցուրներ երաչխաւորութեամբ արձակել կուտայ Զատկի օր։

Անցեալ 6/18ին, Սինէքլի բռնած վայրը ուր բաղձն ալ Յոյն են, 3 Հայեր կռուի բռնուելով Յունաց հետ, 7 Յոյն և 1 Հայ կը վիրաւորուին ծանրապէս. Յունացեալ երկու Հայերն յաջողած են փախչիլ քաղաքէս։

ՎԱՆԷՆ ԼՈՒՐԵՐ

Վանէն ապրիլ 28/10 մայիսին ղրկուած մի նամակէ կը քաղենք հետեւեալ լուրերն.

«Մինչեւ ապրիլ 25 (7 մայիս) մի քանի օր չարունակ ձիւն և անձրեւ եկաւ։ Հայ սկսած է սղնալ։

«Վանի նորընծաիր կուսակալ Խալիլ փաշան երէկ երեկոյ հանդիսաւոր կերպով ռոճնել տուաւ Վեհ. Սուլթանի Ծննդեան տարեգարձն։ Քաղաքի Նոր Դուռնէն մինչեւ Դալըզ փաշայի տուն, հազարաւոր լապտերներ, մոմեր, քարիւղէ և մնթերէ պատրաստուած զանազան լուսաւորիչներ այդ ընդարձակ տարածութիւն։

«Անցեալ օրեր Քիւրտեր Բէօհրի Բէօյա գիւղին մէջ Հայու մը տղիկ

Ես որ ապրում եմ ինձ համար,
Ինձ համար ոչ մի հոգս չունեմ,
Ինձ համար ոչ մի տանջանք,
Ինձ համար ոչ մի վիշտ չկա,
Ինձ համար ոչ մի ցավ չկա,
Ինձ համար ոչ մի վախ չկա,
Ինձ համար ոչ մի կասկած չկա,
Ինձ համար ոչ մի ամոթ չկա,
Ինձ համար ոչ մի մեղք չկա,
Ինձ համար ոչ մի դժոխք չկա,
Ինձ համար ոչ մի դատաստան չկա,
Ինձ համար ոչ մի հոգեվարք չկա,
Ինձ համար ոչ մի մահ չկա,
Ինձ համար ոչ մի հարություն չկա,
Ինձ համար ոչ մի հավիտենություն չկա,
Ինձ համար ոչ մի Աստված չկա,
Ինձ համար ոչ մի սատանա չկա,
Ինձ համար ոչ մի հրեշտակ չկա,
Ինձ համար ոչ մի սուրբ չկա,
Ինձ համար ոչ մի մկրտություն չկա,
Ինձ համար ոչ մի հաղորդություն չկա,
Ինձ համար ոչ մի խաչ չկա,
Ինձ համար ոչ մի Ավետարան չկա,
Ինձ համար ոչ մի եկեղեցի չկա,
Ինձ համար ոչ մի աղոթք չկա,
Ինձ համար ոչ մի ուխտ չկա,
Ինձ համար ոչ մի ծոմ չկա,
Ինձ համար ոչ մի ուրբաթ չկա,
Ինձ համար ոչ մի Զատիկ չկա,
Ինձ համար ոչ մի Ամանոր չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծնունդ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան նախօրեակ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան տոնածառ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ընծա չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ուրախություն չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան տխրություն չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ցավ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան վախ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան կասկած չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ամոթ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան մեղք չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան դժոխք չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան դատաստան չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան հոգեվարք չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան մահ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան հարություն չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան հավիտենություն չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան Աստված չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան սատանա չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան հրեշտակ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան սուրբ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան մկրտություն չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան հաղորդություն չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան խաչ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան Ավետարան չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան եկեղեցի չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան աղոթք չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ուխտ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ծոմ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան ուրբաթ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան Զատիկ չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան Ամանոր չկա,
Ինձ համար ոչ մի Սուրբ Ծննդյան

ՅԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Յաւելուածյիշատակ Թաշճեան Հանդուցեալ Նիկողոս Էֆէնտիի առաջին աշակերտներէն, Ձայնագրութեան և Եկեղեցական երաժշտութեան Հմուտ, վկայեալ երիտասարդ դասատու մը որ այժմ Եւրոպա կը գտնուի, կը փափաքի, ուսկից ալ որ ուզուի, երթալ ու ծառայել ազգին դիւրամատչելի ամսականաւ։

Պէտք ունեցողը թող խմայնէ խմբագրութեանս։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ց. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ » 40 »

Ձգ ծախուին Փարսէյլ, «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Օտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրիտական կամ ռուսական փոստի բդպադրոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրութեան։

BIBLIOGRAPHIE

LA QUESTION D'ORIENT ET LA FRANCE

Par M. N. SELEUSCO.

L'état d'incessante fermentation dans lequel s'agitent les populations de l'Orient, constitue un danger permanent pour la paix de l'Europe qui voit, à chaque quart de siècle, sa sécurité compromise par une conflagration générale.

Cette situation déplorable est entretenue par le machiavélisme des grandes puissances, qui attisent l'incendie dans ces régions peuplées de races antagonistes, *soit pour les annexer à leurs propres états*, soit pour empêcher les puissances rivales de se les approprier.

M. Seleusco ne voit de solution à cette question qu'en organisant une confédération des divers peuples qui composent l'agglomération Balkanique, ainsi que le préconisaient autrefois des publicistes tels que : Michelet, Quinet, Lamartine et Saint-Marc Girardin, et il engage vivement la France, qui a toujours soutenu la politique des nationalistes d'une manière désintéressée, à entrer délibérément dans cette voie, qui ouvre la seule issue conforme en même temps à la raison et au bien-être des peuples de l'Europe.

Rien qu'à ce titre, l'étude de M. Seleusco mérite d'être prise en sérieuse considération, indépendamment des renseignements pleins d'intérêt qu'elle fournit aux lecteurs sur ces contrées toujours grosses de *points noirs*.

Nous ne saurions trop engager nos lecteurs à lire cette intéressante brochure que l'on peut se procurer contre 1 fr. (mandat ou timbres) adresser à la *Librairie des Deux-Mondes*. Paris, 17, rue de Loos.

ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԴՈՒՄ

ՓՈՐՁի խմբագրապետ Մեծ. Պրն. Ազդալ Յովհաննէսեանի կարդացած մի հրապարակական դասախօսութիւնն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացունէ Եւրոպացիներուն նկատողութիւնները Հայերուն մասին և կը նկարագրէ Լանտոնի Անգլօ-Հայկական Մամուժողովին ազատ միթինգը 1878 յուլիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախուի «Արմենիա»ի խմբագրատունն։ Գինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

ՅԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Արմենիա»ի խմբագրութիւնը ըստացած է Ս. Էջմիածնի Մայր-Աթոռի վանքէն հրատարակուած հետեւեալ գիրքերն, որոնք իրենց առջեւ նշանակուած գիներով կը դրկուին յանկացողներին, փոստի ծախքը խմբագրութենէն վճարուելով։ Գինը կանխիկ չդրկուած գիրք չդրկուիր։

1. ՀԱԿՍՏՀԱՒԱՔԵՆԱՅ ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻԻՆ ի Հայս և ի Վիրս (Դիտողութիւնք ի վերայ առաջին և ընկերական կենաց, բարուց և սովորութեանց ազգաց բնակելոց ընդ մէջ Սեաւ ծովու և Կասպից)։ Հայոց, Վրաց, Օսէթների, Եղիւանների և այլնի վրայ ընտանեկան, առեւտրական, կրօնական և այլ հետաքրքիր տեղեկութիւններ պարունակող այս գիրք հայերէնի թարգմանած է պարզ դրբառբառ լեզուով Գեր. Արիստակէս Վ. Սեդրակեան, այժմեան Առաջնորդն Վրաստանի և Իմերէթիի Հայոց։ 2 ֆրանք 80 սանտիմ։

2. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼ ՎՐԴՊՏ. ի Դավրիժեցւոյ· Փրկչական 1605 թուականէն սկսեալ մինչեւ 1663, Հայ ազգի դէմքէն անցած դէպքերի մանրամասն պատմութիւնն է որոց մէկ մասին ինք անձամբ ականատես եղած է պատմագիրը։ Էջմիածնի ամրոցին կրած նեղութիւնները օտարազգի իշխանների և երբեմն ալ նոյն իսկ կաթողիկոսների ձեռքէն, Շահաբասի օրով եղած հայկական գաղթականութիւնն, Աբարատ նահանգի և վասպուրականի մէջ պատահած սրտաշարժ դէպքերն, հայերի նահատակութիւնները, Պարսիկների և Օսմանցիների պատերազմներն և այլ խիստ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ 7 ֆրանք։

3. ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆՆԱՅ ի դասուն երջանկու· գրեց Աբիստակէս Վ. Սեդրակեան։ Սիւնեաց աշխարհի երջանկ դասուն որ մեր ազգային պատմութեան մէջ ոչ պակաս նշանաւոր տեղ բռնած էր երբեմն, չնչքերն և պատմական ու գրական հնութիւնները հայն կը ծանօթացունէ։ 1 ֆրանք 40 սանթիմ։

4. ՆԻԿՈԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ և պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանն ի կաթոլիկութիւն. (երկասիրութիւն Գաբրիէլ եպիսկոպոս Ա.յվազեանի) 1 ֆրանք։

5. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽԱՉԱԿՐՈՒԹԵԱՆ և թագաւորութեանն Երուսաղէմայ (11րդ և 12րդ դարերին մէջ Եւրոպի ունեցած վիճակը և խաչակրութեան պատմութիւնը կընդրկայէ։ Թարգմանիչը Գ. Հ. Ա. Առաքելեանց, ուսեալ և նաեւ ծանօթութիւններ Ռուբինեանց տէրութեան վերաբերեալ որոնք յարաբերութիւն ունեցան խաչակիրներին հետ)։ 1 ֆր 50 ս.

6, ՓՆԱՐ ՄՇԵՑԻՈՑ ԵՒ ՎԱՆԵՑԻՈՑ (Մշեցիների և Վանեցիների անտիպ երդերն որոնք ժողոված է Գեր. Աբրիստակէս Վ. Սեդրակեան)։ 1 ֆր·

7. ԼՍԱՐԱՆ անուն հետեւեալ տետրակներն որոնք հոգեշահ պատմութիւններ և օգտակար տեղեկութիւններ կուտան, կը ծախուին իւրաքանչիւրը 35 սանթիմ

Ա. Պատմութիւն վարուց Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ։

Բ. Կոստանդնուպօլսոյ առումն Օսմանեանց յամի Տեառն 1453։

Գ. Եգիպտոսի հնութիւնները։

ԳԱՄԱՌ-ՐԱԹԻՊԱՑԻ

ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Թիֆլիզի հայ. գրբ. հրատրկբ. ընկերքե.»

==

Մեծանուն բանաստեղծ Գամառ-Քաթիպայի (Ռ. Պատկանեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Դամառ-Քաթիպայի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, ա-ւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի գին 1 ֆրանք և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղ հասցուելու 2 ֆրանք փոստի ծախքանիշ հանդերձ։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

—

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս· Փ. ԱԶԳ· ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

—

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ· ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
(Արամեան)

1887 տարւոյն Ընդարձակ Օրացոյցն հրատարակուեցաւ նախորդ տարիներէ շատ աւելի ճոխ։

Բովանդակութիւն

Բայլ բուն Օրացոյցին կը պարունակէ հետեւեալ վիճակագրական կարեւոր գիտելիքներն։ Օսմանեան կայսրութիւն, — Աւագանի կայսերական պալատան, —Նախարարք Բ. Դրան, —Մեծ պաշտօնատարք Մայրաքաղքին, —Հրամանատարք բանակաց, —Կառավարք նահանգաց, — Պատրիարքութիւնք և ազգապետք, —Օսմանեան դեսպանք, —Դեսպանք օտար տէրութեանց, — Վիճակագրութիւն Օսմ. կառավարութեան, — Հայազգի տաճկանատարք և պաշտօնեայք Օսմ. տէրութեան, — «Հայրապետութիւն Հայոց», —Եպիսկոպոսունք, — Ազգ. կեդրոնական վարչութիւն, — Ճանճնաժողովք, —Պաշտօնեայք Պատրիարքարանի,-Առաջնորդութիւնք Թուրքիոյ, Եւրոպ և տունք, —Հոգեւորութիւնք, — Մայրավանք Թուրքիոյ, —Թաղօրայք Կ. Պոլսոյ, —Համազուար Թաղօրեից, — Բարեգործական և կրթական հաստատութիւնք, —Առաջնորդութիւնք ի Ռուսաստան և այլն,-Մայրավանք ի Ռուսաստան և այլն, – Կայսերական դերդաստան Ռուսիոյ, —Հայազգի տաճկանատարք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլեայլ տէրութեանց,-Հոգեվիճակական Հայ հաստատութիւն,-Բուղքական Հայ հաստատութիւն, — Դատաստանք պետական ուսումնարանի, —Բժիշկք քաղաքական և վինուա-

բական, – Փաստաբանք, – Արուեստագէտք, – Լրագիրք,-Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային,-Եւրոպական միջազգային թղթատարութիւնք,-Եւրոպական նամակատունք,-Ցամաքային թղթատարութիւն Ասիական Թուրքիոյ,-Ժամացոյց սուրհանդակաց Օսմ. միջազգային թղթատարութեան,-Ցուցակք երթեւեկութեանց չոգենաւուց այլեայլ ընկերութեանց,-Պատկեր 1887 թուին, – Վիճակագրութիւնք օտար տէրութեանց, – Ազգք,-Ծանուցմունք։

Ներկայ տարւոյ Ընդարձակ Օրացոյցի ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրացած է։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը։ Գինը 75 սանթիմ փոստի ծախքը կը վճարէ խմբագրատունը։

Պարզ ՕՐԱՑՈՑՑԸ սրի մէջ կայ Վ.Կ. Մակար Կաթողիկոսի պատկերը, կը դրկուի փոստով 30 սանթիմի փոխարէն։

ՐԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Այս գիրքը կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի նաղան ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ՛ երբ ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ երբ հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տունն։

Կը ծախուի «Արմենիա»ի խմբագրատունը· գին 7 ֆրանք՝ փոստի ծախքանիշ։

***

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՊԱՏԿԵՐՔ

Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն Լուսինեանի որ կը հանդչի Փարիզ ի Սէն-Տընի Կեղեւաւինեանց վանքին մէջ, շիրմին պատկերը կը գտնուի «Արմենիա»ի խմբագրատունը։ Շիրմէն վրայ կայ, տապանադիրէն զատ, և Լեւոն Թագաւորի արձանը։

Պատկերի գինն է 60 սանթիմ։ Խմբագրութիւնն կը վճարէ փոստի ծախքը։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ· ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ· Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.